կարելի չնկատել նրա աչքերում արասուքի այն կաթիլները, որոնք դուրս ցայտեցին հրեղէն գնդակների նման:

Մինչեւ այսօր եւ գուցէ յաւիտեան, չեմ կարող մոռանալ այն վշտահար դէմքը իր արդար-վրէժխնդրական զարհուրանքով...

Ես բոլորովին սառեցայ, մնացի քարէ արձանի նման կանգնած: Աչքերիս առջեւը մթնեց, ոտքերս դողացին եւ անշունչ դիակի նման գլորուեցայ գետին...

Մութը բոլորովին պատել էր, երբ յուշի եկայ: Որքա՜ն մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ գլուխս Մարօի գրկումը գտայ: Նա համբուրեց իմ ճակատը, ասելով:

— Դու կը ներես ինձ, Ֆարհատ, ես քո սիրտը կոտրեցի...

Նա սկսեց դառը կերպով հեկեկալ:

— Քո վէրքը վտանգաւոր չէ, Ֆարհատ, ես լոացի նրան, փաթաթեցի, արիւնը բոլորովին դադարել է: Այժմ դու լաւ ես:

Եւ իրաւ, ես զգացի, որ ամբողջ մարմնով շաղախուած եմ արեան մէջ: Իսկոյն հասկացայ, որ վայր ընկնելու միջոցիս գլուխս դիպցրել էի քարին, եւ Մարօն այդ տեսնելով, ետ էր դարձել ինձ օգնելու համար:

— Ես պատճառ եղա... — ասաց Մարօն, — ես կը սիրեմ, մի՜շտ կը սիրեմ քեզ: Մի՛ նախատիր ինձ, Ֆարհատ:

Եթէ մեռած եւս լինէի, այս խօսքերը կարող էին կենդանացնել ինձ: Բայց արեան չափազանց հոսումը բաւականին սպառել էր իմ ուժերը: Ես կարծես երազի մէջ լսում էի նրա խօսքերը, կարծես, երազի մէջ զգում էի նրա ջերմ շրթունքների հպաւորութիւնը, որ ստեպ-ստեպ սեղմւում էին իմ երեսի վրայ...

Մին էլ զգացի՝ մի հսկայական ձեռք վեր բարձրացրուց ինձ գետնից եւ ծտի նման գցեց ուսին. եւ ինձ լսելի եղան Մըհէի խօսքերը.

— Սատանան տանի... մի պստիկ ծվատոելուց ընկած է գետին, կթրթփայ... չի էլ ամաչում... արիւնից սիրտը կմարի՞...

Ես արթնացայ միւս անգամ, երբ գիշերից բաւական անցել էր: Ծերունի որսորդի վրանի մէջ աղօտ լոյսով վառւում էր իւղն սպառուած լապտերը: Մարօն միայնակ նստած էր իմ մօտ. վրանում բացի մեզանից, ոչ ոք չկար. միւսները քնած էին դրսումը: Մարօի առաջին հարցմունքն եղաւ, թէ ինչպէ՞ս եմ զգում ինձ: Ես պատասխանեցի, թէ լաւ եմ, միայն շատ ցաւում եմ, որ ետ մնացի Ասլանի հետ ճանապարհորդելուց: